ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 526 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի N 475-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի օգոստոսի 6-ի «Փրկարար ծառայողի ուսումնական դասընթացում ներգրավելու, դասընթաց անցնելու կարգը և պայմանները, դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանելու մասին» N 475-Ն որոշմամբ սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետում «արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) կադրերի և անձնակազմի հարցերով զբաղվող կառուցվածքային» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) կադրերի» բառերով.

2) 18-րդ կետում «Արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «Ներքին գործերի» բառերով.

3) 20-րդ կետում «արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի մայիսի 4-ի N 504-Ն հրամանի 2-րդ հավելվածով» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարի կողմից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

01.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ